

680

9(4)
304-34



3(4)
3w-34 w
92

Ն. ԵԱՆՁՈՒԿ.

74
97
✓

ԵԱՆ ԷՐՆԱՏ ՍՄՕԼԵԱՐ

~~№ 44~~ 1526

3w-25

IX

ԹԵՐԳՄԵՆՈՒԹԻՒՆ

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՂԱՆԵԱՆՅ

44

97

(Արտատպած «Արձագանք» շաբաթաթերթից)

Центральная Библиотека
Инвентаризация
№ 1526



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ

ՕՐԵՆԵՆ ՓՈԳՈՑ Տ. 112.

1885

20 04

38

Перепечатано изъ газеты „Арцаганъ“



(469 16977-58 41) R

Дозволено цензурою. Тифлисъ, 17 Сентября 1885 г.
Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

ԻՆՐ ՀՈԳԱՏԱՐ ՈՒՍՈՒՑԻՉ

ՄԵԾԱՊԱՏԻԻ Պ. ՎԱՐԴԱՆ

ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑԻՆ

Երախտագէտ սրտով

Նուիրում է

ԳԻՏ ԲԱՆ. ԱՂԱՆԵԱՆՑ

N 40. 1526.

ԷԱՆ ԷՐՆԱՏ ՍՄՕԼԵԱՐ

(Նորա տարելիցի առթիւ)

Անցեալ տարուայ յունիսի 1-ին սլաւօնական աշխարհի մի հեռաւոր անկիւնում, այն է Լաուզիցում, վախճանուեցաւ մի նշանաւոր գործիչ, որի անունը անմոռաց կը մնայ սլաւօնական պատմութեան մէջ: Դա Լաուզիցացի Եան-Էրնստ Սմօլեարն է, որ իւր ամբողջ կեանքը նուիրել էր իւր ազգի անշահասէր ծառայութեան, լոկ միայն նպատակ ունենալով ազատել Լաուզիցական սերբերին վերջնականապէս անհետանալուց գերմանականութեան հոսանքի մէջ, որ ամեն կողմից անսանձ ձգտում էր սլաւօնական երկիրը կլանելու: Որպէս Ժողովրդագիր և պատմաբան, որպէս զինական սլաւոնագէտ, որպէս հրապարակախօս և հրատարակիչ, Սմօլեարը միշտ և ամեն տեղ մարտնչում էր իւր ազգի իրօւունքների, նորա լեզուի համար, զարթեցնում էր լազուիցացի սերբերի մէջ սեպհական պատուի զգացմունք և ազգային հպարտութիւն: Եթէ որ ժամանակի ընթացքում, ծանր փորձերից լետու, Լաուզիցի սերբերը վերջապէս որքան և իցէ բարւոք դրութեան հասան, այդ բանի համար նոքա

ամենից առաջ պարտական են իրանց անձնուրաց առաջնորդներին, որոնք ամենածանր վալրկեաններին անգամ կարողացան խելացի և անդրդուելի տոկունութեամբ առաջնորդել նոցա դէպի առաջադրեալ նպատակը: Այդպիսի Հասարակական գործիչներին էր պատկանում նա և Սմօլեարը, որին գերմանացիք—ի դէպ ասենք—իրանց յատուկ սովորութեամբ վերականգնին Շմալէր անունով:

Լաուզիցը, ինչպէս յայտնի է, բաժանվում է երկու մասն, Հիւսիսային կամ ստորին և Հարաւային կամ վերին: Ստորին Լաուզիցը և վերին Հիւսիս—արևելեան մասը 1815 թուի Վիեննայի գեսպանաժողովին միացան Պրուսիայի Հետ, որի շնորհիւ ենթարկուեցան առանձնապէս խիստ գերմանականութեան. վերին Լաուզիցի աւելի փոքր մասը մնաց Սաքսոնիային, չորին մինչև այդ ժամանակ պատկանում էր լաուզիցացիների բոլոր երկիրը: Սմօլեարի գործունէութիւնը գլխաւորապէս վերաբերում էր վերին, այն է սաքսոնական Լաուզիցին: Այստեղ, Շպրէ գետի եզերքին, Բուզիշինի (Bautzen) շրջակայքում, 1816 թուին ծնուեցաւ Սմօլեարը Լուկօ (Merzdorf) գիւղում, ուր նորա հայրը ուսուցիչ էր և մի և նոյն ժամանակ երգիչ աւետարանական եկեղեցում: Նորա ծնողները երկուսն էլ սերբ էին և տանը խօսում էին բացառապէս սերբ-լաուզիցական լեզուով: Սմօլեարը 1836-ին Բուզիշինում աւարտեց գիմնազիական ուսման ընթացքը և այնտեղից մտաւ Բրեսլաւի Համալսարանը, ուր մինչև 1840 թուականը ուսաւ աստուածաբանու-

թիւն, իսկ այնուհետև անցաւ լեզուագիտական բաժինը և մինչև 1844 թիւը պարապեցաւ սլաւօնական լեզուների և գրականութեան պատմութեան ուսումնասիրութեամբ:

Տակաւին գիմնազիստ եղած ժամանակ Սմօլեարը սկսեց քննադատել այն Հասարակական խրնդիրները, որոնք վերաբերում են գերմանացիների մէջ գտնուող մի բռնւն լաուզիցական սլաւօնների կեանքի ամենաէական խնդիրներին: Այդպիսի խրնդիրներին էր և լեզուի խնդիրը: Վերջին երկու դարում և առանձնապէս նապօլէօնեան պատերազմների ժամանակից, երբ Լաուզիցի սերբերը մօտիկ ծանօթացան օտար սովորութիւնների հետ, նոքա աւելի և աւելի սկսան դադարել իրանց անցեալը գնահատելուց և դիւրութեամբ անձնատուր լինել Հարեան-գերմանացիների ազդեցութեան: Ամենուրեք սկսաւ գործադրութեան մէջ մտնել գերմաներէնը, իսկ սերբ-լաուզիցականը սկսան անարժան Համարել զարգացած մարդու Համար: Երբ Սմօլեարը մտաւ Բուզիշինեան գիմնազիան՝ այնտեղ նա չսեց հայրենի խօսակցութիւն, մինչդեռ Բուզիշինը կենդրոնն էր լաուզիցական երկրի: Սերբիական լեզուն չէր մտնում գիմնազիական դասընթացի ծրագրի մէջ և երիտասարդ լաուզիցացիք, պատրաստուելով իրանց ազգին ծառայել, մոռանում էին մայրենի լեզուն. անգամ քաղաքի փողոցներում շատ հազիւ էր լըսվում մայրենի լեզուով խօսակցութիւն: Երիտասարդ Սմօլեարը դառնութեամբ ականատես էր լինում ազգային լեզուի, և հետը միասին ազգայնութեան

անկմանը, և հաւաքելով իւր ընկեր-սերբերին, դարձաւ գիմնագիտի տեսչին և խնդրեց, որ թոյլ տրուի իրանց շաբաթը երկու անգամ հաւաքուել մայրենի լեզուն տեսականապէս և գործնականապէս սովորելու համար: Գերմանացի տեսուչը բարեյօժարութեամբ ընդունեց Սմօլեարի նախագիծը և տուեց նորան թոյլտուութիւն, աւելացնելով միայն, որ ոչինչ միտք չունի գործնականապէս վարժուելու մի լեզուի մէջ, որ երկու-երեք տասնեակ տարուց յետոյ պէտք է անհետ կորչի աշխարհիս երեսից:

Շուտով գորանից յետոյ, հէնց որ Սմօլեարի խմբակը կազմակերպուեցաւ, սերբական լեզուի, այսպէս ասած, քաղաքական դրութիւնը փոքր ինչ ապահովեցաւ. նորանով, որ ի շնորհս ուրիշ հայրենասէրների և մանաւանդ քաղաքական ժողովի անդամ փաստաբան Կլինի, մուտք գտաւ սերբական ժողովրդական ուսումնարաններում: Սա առաջին փաստն էր սերբ-լաուզիցական լեզուի գոյութեան օրինական իրաւունքը խոստովանելու, այն ինչ մինչև այդ ժամանակ լաուզիցացիք ստիպուած էին սեպհական ոլթերով պահպանել իրանց լեզուն սպառնացող կորստեան վտանգից գերմանացիների երեսից: Մինչև XVIII դարու վերջը սերբ-լաուզիցական լեզուն այնպէս պինդ էր պահպանվում, որ մինչև անգամ հոգևորականները լաուզիցացւոց համար կրօնական — բարոյական բովանդակութիւն ունեցող գրքերը տպագրում էին նոցա մայրենի լեզուով:

Սակայն չնայելով այս բոլորին, պարզ էր, որ

սերբիական լեզուն տարեցտարի արագ քայլերով ընկնում էր: Գերմանական ազդեցութեան հետ այդ լեզուի բաղդի չարագուշակ մի ուրիշ նշանաւոր պայման էլ կար: Նա լաւ ուղղագրութիւն չունէր, իսկ առանց դորան չէր կարելի սպասել լեզուի բարգաւաճման, տարածման և գրական մշակութեան: Բողոքական-լաուզիցացիները գործ էին ածում գրութեան մի եղանակ — բողոքականը (շատ գրքեր մինչև անգամ ուղղակի գերմաներէն լեզուով էին տպագրվում), իսկ կաթոլիկները — կաթոլիքականը. այդ պատճառով մեծ շփոթութիւն էր առաջ գալիս և այսպիսի բաժանումը, ի հարկէ, չէր կարող նպաստաւոր լինել ոչ կեանքի, ոչ լեզուի ծաղկման և ոչ ժողովրդի միութեան համար: Փորձեր եղան լաուզիցական այբուբենը միաւորելով կազմակերպել, մէկ ընդհանուրը ստեղծել, բայց այդ բոլոր փորձերը չպատկուեցան յաջողութեամբ, մասամբ նոր դրութեանց անգործնականութեան, մասամբ էլ նոցա հեղինակների տոկունութիւն չունենալու պատճառով: Սմօլեարը առաջինը եղաւ, որ ձեռնարկեց այդ գործի ինչպէս որ հարկն էր և յաջողութեամբ գլուխ բերեց, այդպիսով ապահովելով իւր լեզուի և գրականութեան կեանքը և տալով սերբերին միջոց բարոյական և հասարակական զարգացումն ստանալու ազգային ոգով, ժողովրդական լուսաւորութեան այդ գլխաւոր գործչի՝ լեզուի միութեան շնորհով:

Այս լեզափոխութեան գործում Սմօլեարին մեծ ծառայութիւն արաւ նորա մօտիկ ծանօթութիւնը

ուրիշ սլաւոնացիների և նոցա գրականութեան հետ տակաւին իւր համալսարանական կրթութեան շրջանում: Այստեղ գլխաւոր դեր խաղում էին լեհերը և չեխերը, որովհետեւ նոցա և միւսների լեզուն մօտաւոր նմանութիւն ունի սերբ-լաուզիցականին: Բրէսլաւի համալսարանում Սմօլեարը գտաւ մի խումբ լեհ ուսանողներ, որոց միջոցով էլ ծանօթացաւ լեհական լեզուին և գրականութեան: Իսկ ինչ վերաբերում է չեխերէն լեզուի սովորելուն, այդ բանի համար Սմօլեարը գտաւ իրան ընտիր առաջնորդ Բրէսլաւեան համալսարանի պրօֆէսօրների մէջ, այն է չեխական վերածնութեան յայտնի ներկայացուցիչ բնագէտ Պուրկինիէին: Սա լսելով երիտասարդ Լաուզիցացու գործունէութեան մասին սլաւօնական նոր սերնդի մէջ, հրաւիրեց նորան իւր մօտ և սերտ յարաբերութեան մէջ մտնելով նորա հետ, սկսեց ինչպէս բարոյական, նոյնպէս և նիւթական օգնութիւն տալ նորան: Նա յանձնեց Սմօլեարին իւր երկու որդոց դաստիարակութիւնը և բացի դորանից, կարգեց նորան իւր ընդարձակ գրադարանի կառավարիչ, որը կատարելապէս մի գանձ էր Սմօլեարի համար, որովհետեւ պարունակում էր իւր մէջ սլաւօնագիտութեան վերաբերեալ մի հարուստ բաժին: Երբ Սմօլեարը անցաւ լեզուագիտական բաժինը, սլաւօնագիտութեան մետոդիքական ուսման մէջ նոցա ղեկավարում էր մի ուրիշ չեխական հայրենասէր, հռչակաւոր Ձեյլակովսկին, որի հետ Սմօլեարը ճանապարհորդեց Ձեյլիայում: Լեհերի և չեխերի հետ ծանօթութեան և

ընդհանրապէս սլաւօներէնի ուսմամբ պարապելու մօտաւոր հետեւանքներից մինն էր իսկ և իսկ սերբ — լաուզիցական ալբուբէնի ձեւակերպութիւնը: Բոլորովին յետ մղելով գերմանական տառերը, Սմօլեարը հիմք ընդունեց լատինական ալբուբենը, և այնուհետեւ օգուտ քաղելով լեհական և չեխական դրութիւնից, երկուսից ևս վերցրեց նշաններ մայրենի լեզուի հնչիւնների արտայայտութեան համար, նալսելով, թէ վերոյիշեալ դրութիւններից որի մէջ որոշեալ հնչիւնը տւելի ճիշտ էր արտասանվում և մի և նոյն ժամանակ աւելի պարզ: Այսպիսով ներկայումս սերբ — լաուզիցական գիրը ներկայացնում է չեխականի խառնուրդ լեհերէնի հետ: Նոր ուղղագրութիւնը իսկոյն ընդունուեցաւ Բուդիշինի սերբ երիտասարդութեան շրջանում, նոյնպէս և Սմօլեարի համալսարանական հայրենակից ընկերների մէջ:

Նոր գրութեան այս յօժարակամ ընդունելութիւնը երիտասարդ սերունդի կողմից արդէն բաւականին ապահովում էր նորա ապագան. մանաւանդ, որ Սմօլեարը կանգ չառաւ ճանապարհին: Նա խոստովանում էր, որ իւր գրութիւնը կարօտ է առաւել ընդարձակ և արագ տարածման, գիտէր, որ միմիայն նորա ներմուծութիւնը ընթերցող հասարակութեան մէջ կարող էր երաշխաւորել նորա յաջողութեան: Այս նպատակով սկսաւ գործնական ձեռնարկներ հրատարակել, ձեռնարկեց լաուզիցա — գերմանական գրուցատրութեան, բառգրքերի, քերականութեան և առհասարակ լեզուի ուսումնասիրութեան նպաստող ամենատեսակ ձեռնարկների

Հրատարակութեան: Հարկաւոր է լինել, որ միւսնոյն ասպարիզում Սմօլեարի հետ աշխատում էին նաև լեզուագէտ Պէրուլը, բանաստեղծ Զէյլէրը, նոյնպէս և փոքր ինչ առաջ վախճանած սլաւօնագէտ Իօրգանը, որ, ի թիւս այլոց, Հրատարակեց լաուզիցական քերականութիւնը, և ուրիշներ: Միացեալ ոյժերի շնորհով Սմօլեարի սկսած գործը վախճան ստացաւ, և ուղղագրութեան նոր դրութեան վիճակը կատարելապէս Հաստատուեցաւ սերբ — լաուզիցական գրականութեան մէջ: Սակաւ ժամանակից լետ, սերբ — լաուզիցական լեզուն մտցնուեցաւ նաև Բուլղիշինեան գիմնադիպում, որպէս ոչ — պարտադիր առարկայ. վերջապէս 1848 թուի յեղափոխութեան դադարումից լետոյ սերբական լեզուի իրաւունքը, գերմաներէնի հետ հաւասար ճանաչուեցաւ սաքսոնական կառավարութիւնից ուսումնարանում, եկեղեցում և դատարանի մէջ: Բայց ամենամեծ հրաշալիքը սերբերի և մանաւանդ Սմօլեարի համար այն փաստն էր, որ 1849 թուին մինչև անգամ իշխան Ալբերտը, Սաքսոնիայի թագաւորականը, զօրքի հետ Բուլղիշին մտած ժամանակ, ցանկացաւ սովորել սերբ-լաուզիցեան լեզուն: Իբրև ուղեցոյց հրաւիրեց նա Սմօլեարին և տարի ու կէս պարապեցաւ: Այս հանգամանքը խիստ բարերար ազդեցութիւն ունեցաւ սերբերի վերայ. եթէ լինէին էլ նոցա մէջ այնպիսիներ, որոնք արհամարհելիս լինէին մայրենի բարբառը, այժմ նոքա ևս ամօթահար եղան ապագայ թագաւորի վարմունքով և ստիպուած եղան փոխել իրանց հայեացքները:

Վառուած լինելով ջերմ սիրով դէպի իւր ազգը, ամենայն դէպքում պատրաստ, ուր միայն կարելի էր լինում ժողովրդական շահերը պաշտպանել, Սմօլեարը, ի հարկէ, չէր կարող ըստ կարելոյն մանրամասնութեամբ չուսումնասիրել իւր ժողովուրդը, նորա անցեալն ու ներկան, որպէսզի դորանով աւելի հաւատով և եռանդով պատերազմէ նորա ապագայի համար: Այս ուսուցումն ևս սկսուեցաւ գիմնադիպական նստարանից: Արձակուրդներին ուշագրութիւն դարձնելով գիւղական երգերին որոնց սպառնում էր նոյնատեսակ անկում, ինչպէս և լաուզիցական ամբողջ ազգայնութեան, Սմօլեարը միտքը դրեց գրի անցնել սերբիական ժողովրդական երգերը: Սորանով էլ սկսուեց նորա անմիջական ուսումնասիրութիւնը մայրենի լեզուի: Համալսարանական դասընթացի ժամանակ նա ևս աւելի ընդարձակեց իւր գիտողութեանց շրջանը այդ ճիւղի վերաբերմամբ, ուսումնասիրեց իրանց ամբողջ երկիրը, նշանակեց ամենահեռաւոր ծայրերը, ուր տակաւին սերբիական խօսքը լսվում էր և ժողովրդագրական նիւթերի քանակութիւնը հետզհետէ ստուարանում էր: Բայց այստեղ էլ Սմօլեարը չէր բաւականանում նորանով, ինչ որ կարողանում էր կատարել իւր սեպհական ոյժերով, աշխատում էր ուրիշներին էլ ձգել դէպի այդ գործը և սորա համար աւելի հաստատուն հող պատրաստել: Եւ Բրեսլաւեան համալսարանում ևս, ինչպէս նաև Բուլղիշինեան գիմնադիպում, Սմօլեարը մի խումբ կազմակերպեց լաուզիցացի երիտասարդներից, որ շուտով տեսչին առաջարկեց ի հաստա-

տութիւն մի ծրագիր սերբիական ընկերութեան, որի նպատակը լինելու էր ուսումնասիրել լատգիցական ժողովրդի պատմութիւնը, ժողովրդագրութիւնը և լեզուն: Ծրագիրը հաստատուեցաւ և բացի դորանից պրօֆէսօրներէից մէկը առաջարկեց նոր ընկերութեան իւր հովանաւորութիւնը և աջակցութիւնը: Ընկերութեան առաջին իսկ ժողովում Սմօլեարը կարգաց մի ճառ լեռնական լատգիցացիների ժողովրդական երգերի մասին: Ժամանակի ընթացքում որպէս Սմօլեարի ժողովրդագրական աշխատանաց պտուղ երևան եկաւ լատգիցական երգերի մի մեծ երկհատոր ժողովածու, որ գլխաւոր առարկայի հետ 'ի միասին պարունակում էր իւր մէջ ալլագան նիւթերի մի շտեմարան և որ ծառայում էր որպէս մի թանկագին գանձ ժողովրդագրական գրականութեան համար: Այս աշխատութեան հրատարակութեան համար սակայն կարևոր էր մի փոքրիկ հովանաւորութիւն գերմանացիների կողմից. միակ գրավաճառը, որ յանձն առաւ տպագրել այս ժողովածուն, անհրաժեշտ պայման դրեց, որ երգերի հետ կցած լինէր նաև գերմաներէն թարգմանութիւնը: Սմօլեարի արած թարգմանութիւնը Հաուպտ անունով մէկը ոտանաւորի դարձրեց և ժողովածուն լոյս տեսաւ այս վերնագրով. «Pjesnicki hornych a delnych Luziskich Serbow» (Volkslieder der Wenden etc.), ուր Հաուպտի անունը առաջին տեղն էր փախում: Չնայելով խիստ թանկագին լինելուն, ժողովածուն արագութեամբ տարածուեցաւ և ներկայումս մատենագիտական Հազուադիւտ գրքերից

մէկն է: «Երգերի ժողովածու» համեստ անունն ներքոյ այդ գեղեցիկ հրատարակութեան մէջ ծածկուած է ժողովրդագրական հարուստ նիւթ. յաւելուածի ձևով տպուած են դորա մէջ ժողովրդական վէպեր, առասպելներ, առածներ, սնապաշտութիւններ, հին-սլաւօնական դիցաբանութեան մնացորդներ, նկարագրուած են լատգիցացիների կեանքի եղանակն ու սովորութիւնները, մի ընդհանուր ճաշակ է տուած սերբ-լատգիցական լեզուի, վերջապէս ժողովածուին կից գտնվում են լատգիցական երկսեռ ժողովրդի հրաշաների տիպեր և աշխարհագրական—վիճակագրական քարտէզ համաստեղ նկարագրութեամբ լատգիցական քաղաքների և այլ տեղերի, առանց բացառութեան այն տեղերի, որոնք մինչև այդ ժամանակ արդէն բոլորովին գերմանացրած էին: Այս նիւթերի հրատարակութիւնը ըստ ամենայնի 'ի դէպ էր: Այդ միջոցին սլաւօնական աշխարհի ամէն անկիւններում այդ ուղղութեան աշխատութիւնները եւ էին գալիս և Սմօլեարը կարծես թէ յիշել տուեց միւս սլաւօնացիներին լատգիցացիների գոյութեան մասին, ցոյց տուեց նոցա, որ այս ազգը բոլոր ոյժով պատերազմում է, պաշտպանելով իւր ազգայնութիւնը, և որ այս յամառ պատերազմի մէջ է նորա ապագայ զարգացման և ծաղկման գրաւականը մնացեալ սլաւօնական աշխարհի կարգում: Գիտութիւնը լիապէս գնահատեց Սմօլեարի աշխատութիւնը և չէ թէ միայն սլաւօնական, այլ նաև գերմանական լրագիրները մեծ համակրութեամբ ողջունեցին նորա

աշխարհ գալը: Բաւական չէ այդ, Ֆրիդրիխ-Վիլհելմ IV կայսրը վարձատրեց Սմօլեարին երգերի հրատարակութեան համար անկէ մեղալլով: Ժողովածուն լոյս տեսաւ այն միջոցին, երբ Սմօլեարը աւարտեց աստուածաբանութեան դասընթացը (1840-ին), այն է I մասը 1841 թուին, իսկ II-ը 1843-ին:

Զր շտապելով մուտ գործելու ծուխի մէջ, Սմօլեարը ուսումը աւարտելուց յետոյ դեռ մնաց Բրէսլաւում: Նորան տանջում էր այն միտքը, թէ քահանայական շրջանում նորա գործունէութիւնը շատ սահմանափակուած պիտի լինէր, մինչդեռ շատ վաղուց մտածում էր, որ այդ ասպարեզում, անմիջապէս շփուելով ժողովրդի հետ, միջոց պիտի ունենայ աւելի մեծ օգուտ բերելու նորան: Դէպքը օգնեց նորան աւելի լայն ուղին ընտրելու իւր համար: Բրէսլաւ ժամանեց Վիլհելմ IV կայսրը: Կայսեր հանդիսագիր Ալեանտարա դուքսը հրաւիրեց իւր մօտ Սմօլեարին, որ յանձնէ նորան չեխական վաղեմի վկայագիրներ թարգմանելու, որոնք վերաբերում էին նոցա հին ծագումին: Սմօլեարի հետ խօսելիս դուքսը առաջին նուագ առաջարկեց նորան պատրաստուել գերմանական համալսարաններից մէկում սլաւօնական բարբառների դասախօսութեանց և ընդ նմին խորհուրդ տուեց ինդիտ տալ կայսեր թոշակ նշանակելու համար: Կայսրը սիրով համաձայնեցաւ երեք տարի թոշակ տալ իւր սեպական գումարից, այն պայմանով, որպէս զի Սմօլեարը իւրաքանչիւր տարի հաշիւ տար իրան իւր

պարապմանց մասին: Սմօլեարը, խրախուսուած այս տեսակ մտադրութիւնից, սկսաւ եռանդուն կերպով ուսումնասիրել սլաւօնական լեզուները Զէլակովսկաւ առաջնորդութեամբ, իսկ արձակուրդների ժամանակ կարելի եղածին չափ սկսաւ ծանօթանալ սլաւօնական երկրի հետ: Ի թիւս այլոց այդ ժամանակին է պատկանում վերը յիշատակած սերբ-լաուզիցական լեզուի ձեռնարկների կազմութիւնը, նոյնպէս և Զէլակովսկու «ռուսաց երգերի արձագանգ» ի և յայտնի «Կրալէզլօրեան ձեռագիրների» թարգմանութիւնները լաուզիցական լեզուով: Հէնց այդ ժամանակ ծանօթացաւ նա Սրէզնէվսկի և Բօդեանսկի ռուս գիտնականների հետ, որոնք նշանաւոր ազդեցութիւն ունեցան նորա ապագայ գործունէութեան վերայ:

Բայց Սմօլեարի Բրէսլաւ մնալը, հայրենի երկրից հեռու կարծես թէ հեռացնում էր նորան իւր գլխաւոր նպատակից: Եռանդուն պարապելով գիտութիւններով, երբեմն լակամայից մտածում էր, թէ աններելի է չոր ու ցամաք տեսական հետազոտութեանց նուիրուիլ այնպիսի մի ժամանակ, երբ ամենուրեք սկսվում էր վերածնութեան շարժումը և երբ ամենից առաջ գործնական աշխատողների ու ղեկավարների պահանջ էր զգացվում: Նա հասկանում էր, որ ժողովրդի մէջ գիտակցութիւն զարթեցնելու համար հարկաւոր էր գառնալ այդ ժողովրդին անմիջապէս կենդանի և նորան հասկանալի լեզուով, հարկաւոր էր շատ անգամ կրկնել նորան միևնույն ճշմարտութիւնները, որպէս զի կարելի

85-77691-58
(464/1691)



լինէր ինքնաճանաչութիւն զարթեցնել ամբոխի մէջ: Ամենամեծ ուրախութեամբ իմացաւ Սմօլեարը, որ Բուզիշինում 1842 թուից պէտք է լոյս տեսնէր առաջին լրագիրը լատգիցական լեզուով ժողովրդի համար—Իօրգանի Jutnicka-ն: Բայց արդէն հինգերորդ ամսին խմբագրութիւնը լալտնեց, որ բաժանորդների սակաւութեան պատճառով լրագիրը չի կարող շարունակուիլ: Դորա մեղը մասամբ նոր ուղղագրութեանն էր, որ մտցրած էր նոյն իսկ Իօրգանի ձեռքով, և որ խրատնեցնում էր անվարժ ընթերցողներին, իսկ մասամբ էլ լրագրի բովանդակութիւնը. այնինչ նորա խմբագիրը հրաւեր ստացաւ Լայպցիգի համալսարանում սլաւօնական բարբառների դասախօսութեանց պաշտօն վարելու: Սմօլեարը չէր կարողանում անտարբեր նայել տակաւին նոր սկսած այնպիսի մի գործի զաղարման, որ առաջնակարգ կարեւորութիւն ունէր: Բրէսլաւը թողնելով շտապեց հալրենիք և ինքը ձեռնարկեց լրագրական գործին, սկսելով հրատարակել Tydzenke Nowiny լրագիրը: Առաջին քաջում մեծ գոհարութիւններով էր առաջ ընթանում գործը. ոչ աշխատակիցներ ունէր և ոչ բաժանորդներ. իսկ գիտնական պարապմունքներն էլ Սմօլեարին շարունակ Բրէսլաւ էին քաշում: Գլխաւոր օգնականները այդ գործի մէջ էին նորա հայրը և լատգիցացի քահանայ բանաստեղծ Զէլլերը. նոքա երկուսն էլ բնակվում էին Լազ (Lohsa) գիւղում, Բուզիշինից $3\frac{1}{2}$ մղոն հեռու, իսկ լրագիրը հրատարակվում էր Բուզիշինում: Բայց և այնպէս միացեալ ուժի

շնորհիւ հրատարակութիւնը շարունակվում էր և շուտով մեծ ժողովրդականութիւն ձեռք բերեց, որովհետեւ խմբագրում էր ժողովրդի ճաշակով, իսկ հրատարակիչները անմիջական յարաբերութիւններ ունենալով նորա հետ, լաւ հասկանում էին նորա ամենազլխաւոր պիտոյքները և գիտէին ամենաշեղծաբար խնդիրներ յարուցանել իրանց հրատարակութեան մէջ: Բաժանորդների թիւը հետզհետէ աւելանում էր, լրագրի նշանակութիւնը օր աւուր մեծանում, և հետը միասին աճում էր նաեւ Սմօլեարի ժողովրդականութիւնը: Այսպիսով լատգիցացիների մէջ ստտիճանարար աւելանում էր միջին հասկացողութեան ընթերցողների թիւը, որոնք առաջ չը կային: Թէ որ աստիճանի աճել էր ժողովրդի մէջ մայրենի լեզուով ընթերցանութեան պահանջը, ցոյց է տալիս այն փաստը, որ Սմօլեարի ձեռքով հրատարակած առաջին լատգիցական օրացոյցը կործ միջոցում սպառուեցաւ երկու տպագրութիւն, իւրաքանչիւրը 1000-ական օրինակ:

Արքան որ լուսաւորութիւնը ծաւալում էր ժողովրդի մէջ, և նորա հոգեկան ոյժերը ամրանում էին, Սմօլեարի գլխում միտք էր ծագում մի այնպիսի հաստատութիւն հիմնել, որի մէջ այդ ոյժերը կարողանային կենդրոնանալ, որ կարողանար երկրի հասարակական զարգացման ղեկավար լինել և պաշտպան հանգիստանար սերբիական ժողովրդեան շահերի: Յայտնի սլաւօն գիտնական Կօլլարը առաջինն եղաւ, որ մտածեց զրականա—հրատարակչական ընկերութիւն հիմնել Բուզիշինում, չեխական

«մատիցաի» նման: Իսկ յետոյ, Չէլակովսկու հետ Չեխիայում արած ճանապարհորդութեան ժամանակ Սմօլեարը իրապէս համոզուեցաւ, թէ մինչև որ աստիճան օգտակար էր մի այդպիսի հաստատութիւն:

Սմօլեարի մտադրութիւնը «մատիցա» հիմնելու մասին իրազործուեցաւ միմիայն 1847 թուին. սաքսոնական կառավարութիւնը թույլատրեց լաուզիցացիներին մատիցա հիմնել, որ շուտով իւր գործունէութիւնը տարածեց նաև սլլոնական Լաուզիցում: Չարգացած սերբիացիները ընկերութեան անդամ գրուեցան առանց խտրութեան դաւանութեան և կոչման. բողոքական պաշտօրներ, կաթոլիկ քահանաներ, ուսուցիչներ, աստիճանաւորներ, ուսանողներ, գիմնադիտներ, քաղաքացիք և մինչև անգամ գիւղացիներ: Առաջին տարուայ վախճանին ընկերութիւնը արդէն մօտ հարիւր յիսուն անգամ ունէր: Բացի բուն լաուզիցացիներից, ընկերութեան մասնակցեցին նաև այլ ազգութիւնների պատկանեալ անձինք. այսպէս, օրինակ, գերմանացի գիմնադիտ, ապագայումը յայտնի Գերման Լօտցէն, չեխերից՝ Նանկան, Չէլակովսկի, լեհերից՝ իշխան Լիւբօմիրսկին, Պաւլիկովսկին և ուրիշներ: Ընկերութեան նախագահ ընտրուեցաւ բուն հայրենաւոր, Դրէզդէնի ազգային ժողովի պատգամաւոր Կլինը, իսկ Սմօլեարին յանձնուեցաւ «Չասօպիսի» խրմբագրութիւնը, որ հրատարակվում էր մատիցաի կողմից: Այդ լրագրի առաջին իսկ տետրում Սմօլեարը սկսեց տպագրել իւր ընդարձակ աշխատու-

թիւնը սերբ-լաուզիցական ուղղագրութեան մասին, իսկ նախագահ Կլինը մի լաւաջաբան գրեց, որ մի հրաւեր էր գէպի սերբերը: Սակայն առանց այս հրաւերների էլ սերբիացիների սրտերը արդէն իսկ եռանդազին և ալեկոծութեամբ բաբախում էին մէկ ինչ-որ նոր բան նախագգալով: Եկաւ 1848 թուականը: Tydzenska Nowina-ն այդ միջոցներին իրաւունք ստացաւ քաղաքական բաժին աւելացնել իւր ծրագրին, և ընթերցողները առանձին համակրութեամբ հետևում էին աւստրիական, սլոգնանցի և ուրիշ սլաւօնների շարժողութիւններին: Այս կենդանութիւնը ամենից պարզ արտայայտուեցաւ մատիցաի անդամների առաջին իսկ ընդհանուր ժողովի մէջ: Ամէնքը խօսում էին, ամենքը ծրագրիներ էին առաջարկում ազգային ոգւով. մէկը յայտնեց, որ կառավարութեան ամեն ճիւղերի մէջ անհրաժեշտ է ներկայացուցիչներ ունենալ սերբիացիներից. մինչև անգամ նախարարութեան մէջ, Սմօլեարի կարծիքով, պէտք է լինէր գոնէ մի հատ սերբ. մի ուրիշը գանգատում էր, որ սեմինարիաներում ապագայ քահանաներին չեն ուսուցանում սերբիական լեզուն. ուրիշները, ընդհակառակը, յայտնում էին իրանց երկիւղը և խորհուրդ էին տալիս հանգիստ նստել, որպէս զի առաւել մեծ թրշուառութիւններ չ'ըրեն իրանց գլխին. սակայն սոյն տեսակ ասացուածներին նկատում էին, թէ սերբիացիների իրաւանց համար մենամարտելը տակաւին չէ նշանակում թշնամաբար վարուել գէպի գերմանացիները, իսկ ձեռները ծալած նստել և չը

ցոյց տալ իւր գոյութիւնը, միեւնոյն է թէ յօժարակամ գէպի կորուստ ընթանալ: Վերջապէս Սմօլեարի խռատութեամբ մասնաժողով ընտրուեցաւ մի խնդրագիր խմբագրելու Սաքսոնիայի արքային մատուցանելու համար: Խնդրագիրը պատրաստուեցաւ, վաւերացնուեցաւ հինգ հարիւրից աւելի ստորագրութիւններով և մատուցուեցաւ կառավարութեան: Նորա պատասխանը ստացուեցաւ լոկ միայն Դրէզդէնում լեղափոխութիւնը զաւարելուց յետոյ, և նորա հետեանքը, ինչպէս մենք վերը յիշատակեցինք, այն եղաւ, որ ճանաչուեցաւ սերբիական լեզուի իրաւանց հաւասարութիւնը գերմանական ուսումնարանում, եկեղեցում և դատարանի մէջ: Այս գիշորութիւնները սերբերին որպէս պարզ և տրուեցաւ նոցա այն խելացի յարաբերութեանց համար գէպի լեղափոխութիւնը, որին շատ էր պարտական կառավարչական իշխանութիւնը: Քաջ գիտենալով, որ լեղափոխութեան անյաջողութեան գէպքում նորա մէջ մասնակցութիւնը անխուսափելի կորստի կենթարկէ լաուզիցական փոքրիկ ազգութիւնը, նաև գիտենալով և այն, որ գերմանական ռամկասեւորութիւնը իւր փալած միջոցին չի դանդաղել գերմանացիները բազմապատկելու, լաուզիցացիք խաղաղ պահեցին իրանց և շարունակեցին իրանց ցանկացածը ստանալ բացառապէս օրինական ճանապարհով. նոքա չէին ցանկանում քաղաքական անկախութիւն ձեռք բերել, այլ աշխատում էին լոկ միայն պահպանել իրանց ազգայնութիւնը և բարձրացնել իրանց ազգի բարոյա-

կան և տնտեսական զարգացման մակերևոյթը: Իսկ և իսկ այս ոգւով էր գործում մատիցան, առաջնորդելով և այլ ընկերութիւններին, որոնք կազմվում էին զանազան տեղեր ոչ միայն քաղաքներում, այլ և գիւղերում:

Յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ Սմօլեարը շատ աշխատութիւններ ընծայեց Tydzenska Nowina լրագրին: Իւր ամուսնութիւնից յետ 1850 թուին նա միջոց ունեցաւ այդ հրատարակութիւնը ամբողջապէս իւր սեպհականութիւնը դարձնել և այնուհետև սկսաւ հետզհետէ զանազան բարեփոխութիւններ մտցնել նորանում. կրկնապատկեց լրագրի գիրքն ու ծաւալը, շարունակ ընտիր նիւթ էր մատակարարում ժողովրդական ընթերցանութեան համար և այլն: 1854 թուին նա լրագրի անունը փոխեց Serbske Nowina և այս անունով հրատարակվում է մինչև այսօր: Ընդհանրապէս այս հրատարակութիւնը մեծ ծառայութիւն արաւ լաուզիցացիների զարգացման և ազգային ոգու արծարծման գործին: Սմօլեարը կարողանում էր այնպէս շարունակել լրագիրը, որ միատեսակ հետաքրքրութեամբ կարգում էին կաթոլիկներն էլ, բողոքականներն էլ, իսկ այս դաւանութեանց հաւատարիմները, ինչպէս և ամենուրեք, այնտեղ էլ միմեանցից անջատուած էին: Հետզհետէ բաժանորդների թիւը մեծանում էր, և շուտով արդէն 1849 թուից յետ Սմօլեարը մօտ 1200 բաժանորդ ունէր. մի թիւ, որ յոյժ նշանաւոր է ընդամենը 90,000 վերին — լաուզիցեան ազգաբնակչութեան հա-

մար: 1858 թուից լրագրին կից Սմոլեարը սկսեց շաբաթական լաւելուած հրատարակել, որ երկու տարուց յետոյ մի անկախ լրագիր դարձաւ թեթեւ ընթերցանութեան համար, Luzycan անունով: Սորանում սկսան գրել սերբիական երիտասարդ գրողները. նոցանից լիշատակութեան արժանի է Հորնիկը, որ Սմոլեարի ամենամօտիկ բարեկամը դարձաւ և որին վերջինս երկու տարուց յետոյ Յանձնեց նաւ «Լաուզիցացի»-ի խմբագրութիւնը: Այս լրագիրը իւր բովանդակութեան շնորհիւ համակրութիւն գօրթեցրեց հասարակութեան մէջ զէպի գլորականութիւնը և մեծ նշանակութիւն ունեցաւ լեզուի և ոճի մշակութեան վերայ: Վորա համար էլ այստեղ ընդունուեցաւ Սմոլեարի կատարելագործած նոր ուղղագրութիւնը:

Ուրիշ պարբերական հրատարակութիւններից, որոնցում Սմոլեարը գործուն մասնակցութիւն ունէր, արժանի է լիշատակել Jarboucher für Slavische Literatur: Սկզբում այս լրագիրը դուրս էր գալիս Լայպցիգում վերոյիշեալ Իօրդանի խմբագրութեամբ, իսկ Սմոլեարը նորա աշխատակիցն էր. բայց 1846 թուից արդէն Իօրդանի ձեռքից առաւ նաւ լրագրի խմբագրութիւնը: Քանի մի տարուց յետ հրատարակութիւնը դադարեց. բայց յետոյ Սմոլեարը, վերաբնակելով Բուդիշին, սկսեց նոր շրջան Jarbücher-ի (1852—1858), որ հրատարակվում էր նիւթերի բազմաճաշակ չափով: Փոքրիկ ընդհատումներիով լրագիրը շարունակուեցաւ մինչև 1869 թիւը, թէպէտ և այլ անունով, այն է սկզբում

Zeitschrift für slavische Literatur, Kunst und Wissenschaft (1862—1865), իսկ յետոյ Centralblatt für slavische Literatur und Bibliographie (1865—1869): Զանազան խնդիրների վերայ այդ լրագիրներում գրած նորա սեպհական աշխատութեանց մէջ, Սմոլեարը միշտ աշխատում էր իւր ժողովրդական հայրենասիրութիւնը միացնել հանրասլաւեան ընդարձակ շահերի հետ: Հրատարակութեան սակաւ լաշողութեան պատճառը այն հանգամանքն էր, որ տեղական գիտնական ոյժերի սակաւութեան պատճառով նորա մէջ տպագրվում էին առաւելապէս թարգմանական յօդուածներ (օրինակ, Հիլթերդինգի Հեղինակութիւնները, իրան Սմոլեարի ձեռքով թարգմանած, նոյնպէս Սրէգնովսկու հետազօտութիւնները և ուրիշներ): Այնուամենայնիւ այդ հրատարակութեանց նշանակութիւնը փոքր չէր ոչ միայն լաուզիցացիների, այլ և բոլոր սլաւօնացիների համար. այն միջոցին, սլաւօնական ազգերի մէջ յարաբերութեանց համարեալ կատարեալ բացակայութեան պատճառով, դա մի իսկական միջոց էր փոխադարձ ծանօթութեանց, մտքերի փոխանակութեան և միութեան:

Բայց Սմոլեարի ամենասիրելի, ամենից թանկագին գործը Բուդիշինի սերբիական մատիցան էր: Այս հաստատութեան գոյութեան մէջ նա տեսնում էր իւր անդին մտածումների իրագործումը և չէր խնայում իւր այդ ստեղծագործութեան համար ոչ ոյժ և ոչ միջոց: Մինչև 1853 թուականը նա վարում էր մատիցաի հրատարակած լրագրի խմբագրի

պաշտօնը. այս լրագրում տպագրվում էին և՛ նորա սեպհական յօգուածները և՛ հետազոտութիւններ: Այնուհետեւ երեք տարի շարունակ վարեց մատիցաի քարտուղարի պարտաւորութիւնը. վերջապէս, 1872 թուին, ընկերութեան լիազօր խորհրդում, ընկերութեան նախագահի մահուան պատճառով, Սմօլեարը միաձայն ընտրուեցաւ վերջին պատուաւոր պաշտօնին: Դա կարծես մի վտրձաւորութիւն էր նորա անխոնջ աշխատանքների համար յօգուտ հայրենեաց: Թէ մինչեւ որ աստիճանի էր հասնում նորա անձնութիւնը իւր ազգութեան, ի թիւս այլոց, երևում է նաեւ նորանից, որ երկու անգամ մերժեց Վարչաւոյի սլաւօնական լեզուների և գրականութեան ամբիօնը: Սմօլեարը լաւ հասկանում էր, թէ որքան անհրաժեշտ էր նորա ներկայութիւնը Բուդիշինում. ինչպէս հայրենեաց, նոյնպէս էլ իրան համար: Սերբիական մատիցաի ընկերութիւնը լիապէս գնահատելով իւր առաջնորդի այսպիսի վարմունքը, 1863 թուի նիստում շնորհակալութիւն մատուց նորան և ընտրեց առաջին պատուաւոր անգամ ընկերութեան: Շատ չանցած Ռուսաստանի հազարամեակի տօնախմբութեան առթիւ Սմօլեարին շնորհուեցաւ ռուսական Աննա 2 քանշանի երկրորդ աստիճանը:

Այն խնդիրները, որոց հետամուտ պիտի լինէր սերբիական մատիցան, քաջ ըմբռնում էր Սմօլեարը: Ընկերութիւնը, նորա կարծիքով, լոկ միայն երկրի գիտնական ոյժերի ժողով չը պէտքէ լինէր, — նա պիտի ղեկավարէր հասարակ դասը — ամբօխի

կրթութիւն և լուսաւորութիւնը: 1850 թուին Բուդիշինի գիմնազիայում սերբ-լատգիցական լեզուի դասերի ուսուցչութիւն ստանալով՝ նա մասամբ իւր աշակերտների օգնութեամբ, իսկ մեծ մասամբ ինքը անձամբ աշխատում էր իւր հայրենիքի գանազան տեղերում գիւղական փոքրիկ ընկերութիւններ կազմակերպել, որոնք տմենքն էլ ձգտում էին դէպի մատիցան և նորա պաշտպանութիւնից և ղեկավարութիւնից օգտվում: Այն ընկերութեանց ժողովներում կարգում էին սերբերէն գրքեր և լրագիրներ, որոնք նիւթ էին մատակարարում որպէս զուարճալի, նոյնպէս և խոհուն խօսակցութեանց, երգում էին սերբիական ժողովրդական երգեր, իսկ երբեմն էլ տեղնուտեղը լինում էր մայրենի լեզուով կարգալ ու գրելու ուսուցումը. Բուդիշինեան մի ընկերութեան մէջ, «Bjesada»-ում, որ տակաւին 1848 թուին հիմնել էր Սմօլեարը, մինչեւ անգամ ներկայացումներ և նուագահանդեսներ էին տրվում սերբիական լեզուով: Դիւաւոր միջոցներից մէկը, որոնցով մատիցան կարողացաւ ամենից յաջող օգտուել ժողովրդական կրթութեան մակերևոյթը բարձրացնելու և ազգայնութիւնը պաշտպանելու համար, ի հարկէ, գրքերի և տետրերի հրատարակել և տարածելն էր սերբիական լեզուով: Այդ գործի առաւել մեծ յաջողութեան համար Սմօլեարը բաց արաւ Բուդիշինում գրավաճառանոց, որ ժողովրդական կրթութեան տարածման բաւականին նշանաւոր կենդրոնը դարձաւ: Այդտեղից սփռվում էր ամբօխի մէջ օգտակար գրքեր, տետրեր, լրա-

գիրներ, թերթեր, որոնք Հրատարակվում էին մատիցախի և նոյն ինքն Սմօլեարի ձեռքով: Խանութք դիտմամբ շուկայում բացուեցաւ, ուր ամեն տեղից շատ էր խռնվում ամբոխը: Տօն և տօնավաճառի օրերը Սմօլեարը սովորաբար ինքն էր նստում խանութի մէջ առաւօտից մինչև երեկոյ և անընդհատ զրուցատրում էր ռամիկ յաճախորդների հետ, հաղորդելով նոցա ինչ որ միայն նոր էր, հետաքրքրական և առանձնապէս օգտակար իւրաքանչիւրին: Տօն օրերին, երբ գիւղացիք քաղաք էին գնում առեւտուրի կամ աղօթելու, նոցանից ամէն մէկը կարծես պարտք էր համարում իրան մտնել Սմօլեարի խանութք չէ թէ միայն նորա համար, որ իւր կամ երեխայից համար որեւիցէ մի հետաքրքիր գրքոյի գնէ, այլ և այն նպատակով, որ խորհուրդ հարցնէ նորանից իւր ընտանեկան, տնտեսական և տնային գործերի մասին. ամէն խնդիր, որ կարող էր գիւղական բնակչի գլխում ծագել, լինէր դա վերաբերեալ աւօրեայ կեանքին թէ հասարակական-քաղաքական երևոյթներին, այդ բոլորը բացատրվում էր այնտեղ հասարակ կենդանի և հասկանալի խօսքով և իւրաքանչիւր այցելու մեկնում էր իւր առաջնորդից թեթեւացած սրտով, պայծառ մըտքով, Սմօլեարը ամենքին օգնում էր, ինչքան միայն կարող էր: Մի անգամ մի ռուս գիտնական պ. Վ. այցելեց Սմօլեարին այդպիսի մի տօն օր և նորան շրջապատուած գտաւ բազմաթիւ այցելուներով: Պ. Վ.-ի այցելութիւնից օգուտ քաղելով Սմօլեարը սկսաւ ի թիւս այլոց խօսել ռուսաց և լատգիցա-

ցիների եղբայրութեան և նոցա կարեկցութեան մասին գէպի լատգիցական ազգը, այլ սլաւօնացիների հետ հաւասար, և այդ միջոցին բոլոր ներկայ գտնուողների հետ ծանօթացրեց իւր հիւրին. սկսան երկարատե ողջոյններ հաւաստեաց անկեղծ զգացումներով և եկուոր ռուսը մասամբ իւր բոլաց հերոսը դարձաւ: Սմօլեարի խանութք ժամանակի ընթացքում մի հարուստ շտեմարանի փոխուեցաւ, որ սլաւօնական գրավաճառութեան կենդրոններից մինը եղաւ: 1863 թուին Սմօլեարը ընկեր գտաւ իրան Պէխ անունով մէկին (Տուրգենեվի թարգմանողը լատգիցական լեզուի), և բուդիշինում հրատարակչական և գրավաճառութեան պահեստ հիմնեց «Schmoller und Pech» անունով. այդ ժամանակից գրավաճառութիւնը առանձնապէս կենդանութիւն ստացաւ լատգիցում:

Բայց որքան էլ թւում էր թէ յաջող էր գրնում լատգիցական ժողովրդի աստիճանաբար վերածնութիւնը ինքնուրոյնութեան ոգւով, այնուամենայնիւ այդ վերածնութեան ուղեցոյցները խոստովանում էին, որ լատգիցացիք մի բուռն աննշան ժողովուրդ են, անկարող սեպհական ոյժերով, առանց ազգակից հարեանների պաշտպանութեան, մի որ և է հաստատուն հետեանքի հասնելու: Գոնէ Սմօլեարը միշտ նորա վերայ էր մտածում, որ կարելի եղածին չափ մօտիկ յարաբերութիւններ կապէ միւս սլաւօնական երկրների հետ և գոնէ զրական ասպարիզում միութիւն հաստատէ: Այս մտքով էր նա արդէն ղեկավարուած Slavische Jahrbücher-ի

Հրատարակութեան ժամանակ. ապագայում, երբ սերբիական մատիցաի գործունէութիւնը ընդարձակուեցաւ, և երբ Սմօլեարը սեպհական Ֆիրմա ունեցաւ, այդ օրինակ մերձաւորութեան և միութեան անհրաժեշտութիւնը ևս աւելի ստիպողական դարձաւ: 1858 թուին Բուդիշինին ալցելեց ռուս գիտնական Ա. Ֆ. Հիլֆերդինգը. նա Սմօլեարին խորհուրդ տուեց Ռուսաստան գնալ: Այն կենդանութիւնը, որ տիրել էր ռուս Հասարակութեան Խրիմու պատերազմի պատճառով, առանց այն էլ Հրատարակել էր Սմօլեարին. բացի գործանից, նա ուզում էր յարաբերութեան մտնել ռուս գրաւորականների հետ, այլ և մտածում էր նիւթական օգնութիւն ստանալ սերբիական մատիցաի Համար: Եւ ահա 1859 թուին գրամական աննշան պաշարով նա գնաց Պետերբուրգ, բայց մի այնպիսի ժամանակ, երբ քաղաքի բնակիչների մեծ մասը ամարանոց էր գնացած, այն է յունիս ամսին: Նորան մնում էր կամ ձեռնունայն վերադառնալ և կամ սպասել աշնան, այն ինչ ապրելու միջոց չունէր: Բարեբաղտաբար մի բարի մարդ նորեկ օտարականին փոխարինարար տուեց Հինգ Հարիւր ռուբլի և այս գումարի մեծ մասով, որ պահել էր որպէս պաշար, նա հետեւեալ գարնան Ռուսաստանից Հայրենիք վերադարձաւ: Պետերբուրգում նա ապրում էր մասամբ գրականական երկասիրութիւններով աշխատակցելով քանի մի լրագրիչներին, որոց մէջ գետեղումէր այնպիսի յօդուածներ, որոնք խիստ հետաքրքրում էին ռուսներին զիւղական լեղափոխութիւնից առաջ, այն է

կալուածատէրերի և զիւղացիների հողային չարաբերութիւնների մասին գերմանական տէրութեանց մէջ. բացի գործանից նա աշխատում էր կայսերական Հասարակական գրադարանում, կազմելով Ռուսաստանում նոր լոյս տեսած գրքերի ցուցակը. որ բացի վարձատրելուց դեռ նիւթ էլ մատակարարեց նորա մատենացուցակին: Իւր նախկին բարեկամների, Սրէզնեվսկու և Հիլֆերդինգի միջնորդութեամբ Սմօլեարը ձմեռուան ընթացքում ծանօթացաւ այլ ռուս գիտնականների և մատենագիրների հետ, և ուղեկից ունելով նոցա բարի ցանկութիւնները գործնքին Հայրենիք վերադարձաւ, ուղեկցելով Սրէզնեվսկու ընտանիքին, որ արտասահման էր ուղևորվում:

Մի քանի տարուց լետոյ, 1867 թուին, Մոսկվայում բաց եղաւ ժողովրդագրական աշխարհահանգէս, այդ միջոցին կայացաւ նաև սլաւոնական ներկայացուցիչների նիստը, որ նպատակ ունէր միութեան սերտ կապ հաստատել սլաւօնացիների մէջ: Որպէս սերբ-լատգիցեան ներկայացուցիչ դարձաւ Սմօլեարը շնաց գոքտոր Դուչմանի հետ: Այդ ժամանակ Սմօլեարը, ուրիշ պատգամաւորների հետ, ներկայացաւ հանգուցեալ թագաւոր կայսեր: Կայսրը շատ սիրով ընդունեց պատգամաւորութիւնը Յարսկի սէլօում և ի թիւս այլոց, Սմօլեարի հետ խօսեց ռուսերէն լեզուով: Կայսեր Հարցին, թէ ինչ գրութեան մէջ գտաւ նա Ռուսաստանը իւր երկրորդ այցելութեան ժամանակ, Սմօլեարը պատասխանեց. «կարճ միջոցում Ռուսաստանը այնպէս փոխուել է,

որ չէ էլ հանաչվում. ստրկական վիճակը փոխուել է, դատարանները՝ հրապարակական են դարձել, մամուլը մեծ ազատութիւն է ստացել»։ Կայսրը գոհ մնաց այդ պատասխանից։ Սմօլեարը բարեհաճ ուշադրութեան արժանացաւ նաեւ հանգուցեալ կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի և մեծ իշխանուհի Մարիա Ալէքսանդրովնայի կողմից։ Նկատենք այլևս մի փաստ. որ վերաբերում է Սմօլեարի երկրորդ դալստեան ի Ռուսաստան։ Մէկ ճաշի ժամանակ սլաւոն հիւրերի ժողովի մէջ, ի թիւս այլոց, խօսք ընկաւ նորա մասին, թէ անհրաժեշտ է Ռուսաստանում կլասսիքական գիմնազիաների թիւը մեծացնել։ Կոմս Տալստոյն նկատեց այդտեղ, թէ դժուար է ռուսաց լեզուն գիտեցող ուսուցիչներ գտնել կլասսիքական լեզուների համար։ Այդ ժամանակ Սմօլեարը արտայայտեց Լայպցիգում մի ուսուցչական սեմինարիա հաստատելու միտքը, ուր օտարացիները կարողանային ռուսաց լեզուն ուսանել, իսկ ռուսները հին լեզուներ։ Ինչպէս յայտնի է, այս միտքը ապագայում իրականութիւն ստացաւ։

Սմօլեարի կրկին այցելութիւնը Ռուսաստանին, բազմաթիւ յարձակմունքներ յարուցեց նորա գէմ գերմանացիների կողմից, որոնք դժգոհութեամբ էին նայում սերբ-լաուզիցական ազգութեան վերածնութեան վերայ ընդհանրապէս և Սմօլեարի վերայ մասնաւորապէս, որպէս այդ շարժողութեան գլխաւոր յանցաւորի և ներկայացուցչի։ Այս բոլոր յարձակմունքներին Սմօլեարը ուշադրութիւն չէր դարձնում. նա գիտէր, որ վախենալու հարկ չունէր

ոչոքից, որովհետեւ նորա գործունէութիւնը չէր շոշափում քաղաքականութիւնը, այլ գլխաւորապէս ուղղուած էր միջոցներ որոնելուն իւր ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու համար և դէպի հոգեւոր կապ պահպանելը միւս սլաւոնացիների հետ։

Սմօլեարը սերբիական մատիցաի նախագահ դառնալով՝ մտածեց իրագործել իւր վաղուց փայփայած միտքը այսպէս անուանած «սերբիական տան» հաստատութեան վերաբերութեամբ։ Բանը նորանուան է, որ մինչև այդ ժամանակ ընկերութիւնը սեպհական տուն և մշտական ապաստանարան չունէր։ Ընկերութեան գրադարանը հետզհետէ աճում էր, ազգային հնութիւնների լիբրատիկների ժողովածուն Սմօլեարի և նորա բարեկամների կրկնապատկած աշխատութեան շնորհիւ նոյնպէս մեծանում էր, և այս ամենը չէր կարող բաց լինել ժողովրդի համար։ «Սերբիական տունը», որ պէտք է լրացնէր այս ստիպողական պահանջը, Սմօլեարի ամենամեծ մտածման առարկան էր։ Բուդպէշում մի գետին էր ծախվում իւր փոքրիկ տնով, այս դէպքը ձեռքից բաց թողնել ցաւալի մի բան էր, այն ինչ ընկերութիւնը դրամ չունէր։ Սմօլեարը չ'նայելով, որ ինքն ևս դրամական ոչ մի գումար չունէր, որոշեց իւր պատասխանատուութեամբ գնել այդ տունը։ Իւր ժողովրդականութեան և վերին աստիճանի ազնիւ անուան շնորհիւ նա իւր համար վաղի բացարաւ գերմանացիների մէջ և 500 թալէր ձեռք բերեց, կալուածագրի հաստատութեան համար։ Սակայն դա մի կաթիլ էր ծովի մէջ, որով-

Հետեւ մօտ քսան հազար թալէր էր պահանջվում: Հարկաւոր եղաւ դիմել ուրիշ սլաւօնացիների օգնութեան, որոնց սրտին մօտ էր լաուզիցական վերածնութիւնը: Այդ նպատակով Սմօլեարը իւր երկրորդ կնոջ հետ հիւանդ հիւանդ գնաց ճանապարհորդութիւն անելու, գրպանում ունենալով ընդամենը 85 թալէր, հաշուելով սորա հետ և այն 50 թալէրը, որ ստացել էր վարձուորներից իբրեւ տան վարձ. իւր բացակայութեանը ժամանակ այնտեղ բնակուելու համար: Սրժան չնստեց՝ նորան այդ ճանապարհորդութիւնը և լոկ այն մտածմունքը, որ լաուզիցացիք «սերբիական տուն» պիտի ունենան, կարող եղաւ թեթեւացնել նորա ֆիզիքական և բարոյական տանջանքները: Ինչ էլ որ լինէր, սակայն բաւականին գումար ժողովուեցաւ ստորագրութեամբ և նուիրաբերութիւններէ: և տունը՝ պատկանեալ գետնով անցաւ մատիցաի տիրապետութեան: Չձմարիտ է, որ տոկոսիքը վճարելու համար ընկերութիւնը ստիպուեցաւ ձեռք բերած կալուածքի մի մասը վարձու տալ, բայց այնուամենայնիւ նորա մէջ որքան և իցէ յարմար բնակարան կար գրադարանի և հնագիտական ժողովածոյքի և որ աւելի նշանաւոր է, սեպհական տպարանի համար: Սերբիական առաջին տպարանի նշանակութիւնը շատ մեծ էր. արդէն բոլոր գրքերը կարողէին իւր ժամանակին և անարգելք լոյս տեսնել, հրատարակութիւնները երեք անգամ աւելի արժան էին նրատու. բացի դորանից, տպարանը, որ օրինակելի կերպով առաջ էր տանում Սմօլեարը, սկսաւ բաւա-

կանին արդիւնք բերել ընկերութեան, մասնաւոր, որ ամբողջ Լաուզիցում միայն այդտեղ կար յարմարութիւն երաժշտական խաղեր տալելու: Թէ մինչև որ աստիճան տպարանը նպաստում էր մատիցաի ձգտումներին, երևում է նորանից, որ նորա գոյութեան առաջին չորս տարին աւելի շատ սերբիական գրքեր լոյս տեսան, քան թէ նախընթաց 15 տարուայ ընթացքում:

Այսպիսով, այս եռաճգուն և տոկուն գործողի շնորհով արագ քայլերով առաջ էր ընթանում լաուզիցեան սերբերի վերածնութեան գործը: Արդէն պարզ երևում էին կիսադարեան յամառ աշխատանքի պտուղները և Սմօլեարը Լաուզիցի մասին համարձակ կարող էր ասել նոյնը, ինչ որ երբեմն ասել էր Ռուսաստանի մասին. — Համեմատաբար կարճ ժամանակում Լաուզիցը այնպէս փոխուել է, որ չէ ճանաչվում. այնքան արծարծուել էր ազգային ոգին, լաուզիցացիների մէջ ամրապնդուել էր ազգային ինքնաճանաչութեան գաղափարը, բարձրացել էր հասարակական զարգացման մակերեւոյթը: Հասարակական ծառայութեան ուսպարէզ արդէն մտել էր երիտասարդ սերունդը, որ Սմօլեարի ձեռքով էր կրթուած, և նա ուրախ էր, որ իւր սկսած գործը չէ ոչնչանում, որ նորատի գործիչները նոյն եռանդով և հաստատակամութեամբ են առաջ տանում սկզբնաւորած գիտութիւնները:

Տարաբաղաբար քանի մի ցաւալի հանգամանքներ նսեմացրին այս արժանաւոր մշակի ուրա-

խութիւնը: Այսպիսիներէն էր, օրինակ, «սերբիական տան» անցքը: Մի ուրա սերբիական մատիցաին փոխ տուեց վեց հազար թալէր, որ ընկերութիւնը պարտաւորում էր վերադարձնել նորան առաջին իսկ հնարաւորութեանը: Այդ փողը տրուած էր մատիցաի անշարժ կայքի գըտակոնով, այսինքն տան վերայ իւր գետնով: Մինչդեռ բարերարը խճճուած էր գործերում, նորա կայքը աճուրդի դրուեցաւ վաճառելու, և սերբիական մատիցաից պահանջեցին պարտքը շահով վերադարձնել, սպառնալով, հակառակ դէպքում, անշարժ կալուածքը վաճառել: Այս լուրը կայծակի պէս հարուածեց խեղճ ծերունուն. նորան այնպէս էր թւում, թէ ամեն բան, ինչ որ գերբնական ոյժերով ձեռք էր բերուած, կորստի է ենթարկվում, թէ մատիցան, զրկուելով տանից, գետնից և դրամական միջոցներից, վաղ թէ ուշ կը դադարեցնէ իւր գոյութիւնը, իսկ հետը միասին կը դադարի նաև լաուզիցական սերբերի մտաւոր շարժումը: Այս ծանր տպաւորութեան տակ նա վերստին ճանապարհ ընկաւ արտասահման, բայց այս անգամ այնտեղ շատ չնչին նիւթական օգնութիւն գտաւ, ինչու որ նորա արտասահմանեան վաղեմի բարեկամներից շատերը արդէն գերեզման էին մտել, իսկ նոր սերունդին այլ տեսակ խնդիրներ էին հետաքրքրում: Եւ այսպէս այդ գործը ցաւալի վիճակի մէջ մնաց: Սերբերին կարծեմ յաջողեց միայն արտօնաւոր պայմանագիր գրել տալ կալուածքի գրաւակոնով պարտքի վճարման համար և ազատել մատիցաի անշարժ կայքը,

բայց թէ ինչ կլինի այս բոլորի վախճանը — լայտնի չէ:

Մի ուրիշ երևույթ, որ աւելի վիրաւորական էր լաուզիցացիների և առանձնապէս Սմօլեարի համար, վերջերումս տեղի ունեցած իրողութիւնն էր, այն է որ հետզհետէ պակասում էր սերբիացի քահանայից թիւը. հները մէկը միւսի ետևից մեռնում էին, իսկ բաց մնացած տեղը ոչ ոքի չէր տրվում. կառավարութիւնը սպառնում էր այդ ծխերի համար գերմանացի պատօրներ ուղարկել, որոնք չգիտէին սերբերէն խօսել և այսպիսով խլել ժողովրդից ազգութեան պահպանութեան ամենագլխաւոր միջոցը: Սմօլեարին վերջին ճանապարհորդութեան միջոցին աւելի շատ էր մաշում այդ խնդիրը, քան դրամական պարտքը, մանաւանդ երբ հայրենիքից նորան հաղորդեցին մի քանի քահանայից զրկուելու լուրը: 1881 թուին մօտ տասը ծուխ առանց քահանայի էր մնացած: Որպէս զի պարապ մնացած տեղերը այնպիսի մարդիկ անցնէին, որոնց կարողանար ժողովուրդը հասկանալ, պէտք էր միակ միջոցի դիմել, — այն է քահանաներ հրաւիրել սլովակներից ¹⁾, որովհետև կառավարութիւնը թույլ չէր տալիս հրաւիրել ոչ չեխերին և ոչ լեհացիներին: Սակայն Սմօլեարի հաւաքած նուիրատուութիւններով կա-

¹⁾ Սլավոնացիք, որոնք ընկալութիւն էին հաստատած Հունգարիայի հեւսիսային մասնում:

րելի եղաւ միմիայն երկու ծուխին քահանայ նշանակել:

Այս տխուր հանգամանքները ամենաուժգին կերպով ներգործեցին լաուզիցացիների բազմամեայ աշխատութեամբ վաստակած առաջնորդի վերայ. նորա՝ չափազանց բռնութիւններով, զրկանքներով, պատերազմներով, տանջանքներով լի կեանքը մօտենում էր վախճանին: Արդէն 1882 թուին, Պետերբուրգ եղած ժամանակ, Սմօլեարը այնպէս թոյլ էր, որ վախենում էր միայնակ փողոց դուրս գնալ, բայց այնուամենայնիւ չէր դադարում իւր հարազատ սերբիացիների համար աշխատելուց: Շուտով նա հայրենիք վերադարձաւ, բայց հիւանդութիւնը և անգործութիւնը չէ թէ միայն անհետացան, այլ ևս առաւել զօրեղացան նորա մէջ, մինչև որ գերեզման իջեցրին: Տակաւին քանի մի ժամ մահուանից առաջ նա պահանջեց իւր լրագրի համարը նայելու, որ պատրաստուած էր տպագրութեան համար, սակայն արդէն նոր համոզուեցաւ, որ աչքերը հրաժարվում էին նորան ծառայել:

Շուտով արդէն այլ ևս չկար նա:

Բայց Սմօլեարը սկիզբ դրեց մի մեծ գործի, — լաուզիցական սերբերի վերածնութեան: Այսուհետև նոցա նպատակը պիտի լինի — առանց շեղուելու առաջ գնալ ցոյց տուած ճանապարհով և իրագործել այն մեծ գաղափարները, որ կտակել է նոցա վերակենդանութիւն տուողը: Իսկ մնացած սլաւօնացիք և մասնաւորապէս մենք, ռուսներս, մեր բարոյական

պարտքը պիտի համարենք օգնել մեր արենակից եղբայրներին իրանց բարի նպատակներին հասնելու ¹⁾:

¹⁾ Յօդուտ Սերբ-լաուզիցեան մատիցաի ընկերութեան նուիրաբերութիւնները կարելի է ուղարկել ընկերութեան նախագահ Հօրնիկին այս հասցեով. — (Bautzen Köönichreich Sachsen), Herrn M. Hornik, im Domstift.



THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
NEW YORK

THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
NEW YORK



2m

680

2013

